

## ИСТОРИЯ

### Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (Ալեքսանդրապոլի օրինակով)

ՀՏԴ 930

*Հայրապետյան Արմեն Ս.*

*ավագ գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի, ՀՀ)*

*ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)*

*armenani@mail.ru*

**Հանգուցքառեր՝** Ալեքսանդրապոլ, Լ. Սարգսյան, ինքնակառավարում, օկուպացիա, քաղաքային վարչություն, քաղաքային խորհուրդ, Գ. Մելքոնյան, Պ. Լևոնյան, ՀՀ կառավարություն, հեղափոխական կոմիտե:

#### Деятельность местных органов самоуправления в годы первой Республики Армения (на примере Александрополя)

*Այրապետյան Արմեն Ս.*

*Старший научный сотрудник, к.и.н., доцент*

*Ширакский центр арменоведческих исследований НАН РА (Гюмри, РА)*

*Институт истории НАН РА (Ереван, РА)*

*armenani@mail.ru*

**Аннотация.** 15 мая 1918 г., оккупировав Александрополь, турки восстановили деятельность городского самоуправления. В течение следующих шести месяцев Александропольское городское самоуправление стало единственным органом, где были сосредоточены все общественные и государственные дела города и уезда, одновременно выступая в качестве посредника между населением и турецким командованием.

Осенью 1918 г. проигравшая в войне Турция вывела свои войска с оккупированных территорий, и с 4-ого декабря Александропольский уезд был объявлен частью Армении. Следующие два года Александрополь пережил сложный и неоднозначный период: беспорядки в местном самоуправлении, сложные отношения с Центром, межпартийная борьба, голод, эмиграция, сироты, Майское восстание. Однако последовательными действиями, предпринятыми местными властями с середины 1919 г. жизнь в городе вернулась в нормальное русло.

Осенью 1920 г. ситуация снова изменилась. В результате турецко-армянской войны город и уезд во второй раз были оккупированы турками. Турки, вошедшие в Александрополь, установили в уезде советскую власть и в сотрудничестве с большевиками попытались завершить последнее действие по истреблению восточных армян. Так продолжалось до конца апреля 1921 г.

**Ключевые слова:** Александрополь, Л. Саргсян, самоуправление, оккупация, городской совет, городская дума, Г. Мелконян, П. Левонян, Правительство РА, революционный комитет.

#### Activities of Local Self-Government Authorities in the Years of the First Republic of Armenia (by the example of Alexandropol)

*Hayrapetyan Armen S.*

*Senior Researcher, PhD on History, Associate Professor*

*Shirak Center for Armenological Studies RA (Gyumri, RA)*

*Institute of history of NAS RA (Yerevan, RA)*

*armenani@mail.ru*

**Abstract.** By occupying Alexandropol on May 15, 1918, the Turks restored municipal autonomy. For the following six months, the municipal autonomy of Alexandropol became the only body that concentrated all the social and public affairs of the city and uyezd, at the same time acting as a mediator between from one side city and provincial population and from the other side the Turkish command.

Turkey, defeated in World War I, withdrew its troops from the occupied territories in the fall of 1918, and on December 4, the province of Alexandropol was declared as part of the Republic of Armenia. For the next two years, Alexandropol experienced a difficult and controversial period: chaos in local and self-government bodies, complicated relations with

the Center, inter-party struggle, famine, thousands of migrants, orphans, the May Uprising. However, due to the coherent steps taken by the local authorities beginning from the mid-1919, life in the city returned to normal. In the fall of 1920, the situation changed again. As the result of the Turkish-Armenian war, the city and province were occupied by the Turks for the second time. The Turks, who entered Alexandropol, established Soviet rule in the province and, co-acting with the Bolsheviks, tried to complete the last actions of annihilation of the Eastern Armenians. This situation lasted until the end of April 1921.

**Key words:** Alexandropol, L. Sargsyan, autonomy, occupation, municipal council, municipal administration, G. Melkonyan, P. Levonyan, RA Government, Revolutionary Committee.

Քաղաքային ինքնավարության առաջին մարմիններն Ալեքսանդրապոլում ձևավորվեցին 1896 թ.՝ Գ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ [35, էջ 42-50]: Դրանք չնչին փոփոխություններով գործեցին մինչև 1917 թ. սկզբները: Փետրվարյան հեղափոխությունից հետո ժամանակավոր կառավարությունը քաղաքային ինքնավարությունների ձևավորման համար սահմանեց ժողովրդավարական ընտրական համակարգ՝ հնարավորություն տալով քաղաքներին ստեղծել քաղաքային խորհուրդներ ու վարչություններ: Ցավոք 1917 թ. ժողովրդավարական սկզբունքների հիման վրա ձևավորված Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը երկար կյանք չունեցավ: Մայիսի 15-ի առավոտյան թուրքական զորքերը գրավեցին քաղաքն ու համանուն գավառի մեծ մասը [7, էջ 73]: Ալեքսանդրապոլի համար օրհասական այդ պահին քաղաքային խորհրդի և վարչության անդամները, հասարակական ու պետական կազմակերպությունների ղեկավարները, ինչպես նաև քաղաքային ոստիկանությունը՝ ողջ կազմով, խուճապահար լքեցին կործանվող քաղաքը, այնպես որ քաղաքային ինքնավարությունը դադարեց գոյություն ունենալուց [11, թ. 3; 4, էջ 2]:

Ալեքսանդրապոլը գրավելուց անմիջապես հետո թուրքերը վերականգնեցին քաղաքային ինքնավարության գործունեությունը: Մայիսի 17-ին քաղաքացիների ընդհանուր ժողովը Առևտրական գիմնագիայի կառավարիչ Լ. Սարգսյանի գլխավորությամբ ձևավորեց 29 հոգուց բաղկացած քաղաքային խորհուրդ (16 հայ, 3 հույն, 3 մահմեդական, 3 ռուս, 2 վրացի, 2 հրեա) [1, էջ 28]: Հաջորդ օրը խորհուրդն իր կազմից ընտրեց 15 հոգանոց քաղաքային վարչություն, 16 հանձնաժողովներով (սանիտարական, պարենավորման, վերստուգիչ, ֆինանսական, ցուցակագրման, և այլն) [31, թ. 8; 11, թ. 30]: Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ, քաղաքային խորհրդի և վարչության նախագահ ընտրվեց Լ. Սարգսյանը, օգնականներ՝ Պ. Մերկուրովը և Հաջի Յուսուֆ-Օղլի-Յուսուֆովը, քարտուղար՝ Յիխիստովը, թարգմանիչ՝ Մուբալաջյանը [11, թ. 5]:

Թուրքական հրամանատարությունը մայիսի 19-ին ճանաչեց քաղաքային իշխանությունների օրինականությունը, իսկ մայիսի 22-ին Ալեքսանդրապոլ ժամանած Վեհիբ փաշան Առևտրական գիմնագիայի շենքում հանդիպեց

նորընտիր խորհրդի անդամներին: Խորհուրդը նրան ներկայացրեց 9 հոդվածից բաղկացած խնդրագիր՝ պահանջելով հարգել անձի, գույքի ու պատվի անձեռնմխելիությունը, դադարեցնել թալանը, կամայականություններն ու բռնությունները և թույլ տալ Կարսի շրջանից գաղթած հայերին վերադառնալ իրենց բնակավայրերը [4, էջ 3]:

Հունիսի 26-ին քաղաքային վարչությունը վերակազմավորվեց, իսկ բոլոր գործերը կենտրոնացվեցին մեկ ընդհանուր ղեկավարությամբ հինգ բաժիններում՝ ֆինանսա-տնտեսական (Տեր-Մարտիրոսով), վարչական (Ս. Ղազարյան), սանիտարա-բժշկական (Յիխիստով), տեխնիկական (Չախմասազով) և պարենավորման (Յուսուֆով) [10, թ. 5]:

Ուզանակաված գավառում արդարադատության համակարգը չվերագործարկվեց: Թուրքերն ուղղակի թույլ տվեցին Քաղաքային ինքնավարությանը կից «Քաղաքացիների միջև ծագած իրավաբանական բնույթ կրող վեճերի ընկույթան» հանձնաժողովին քննել թեթև հանցանքները [31, թթ. 9-10]: Փոխարենը ստեղծեց նոր ոստիկանություն: Ժամանակակիցների վկայությամբ արդեն մայիսի 16-ի առավոտյան քաղաքի փողոցներում հայտնվեցին պարեկային խմբեր [3, էջ 2], իսկ չորս օր անց կազմավորվեց 50 հոգանոց թուրք-հայկական խառը ոստիկանություն [38, էջ 2]:

Քաղաքային իշխանությունների գործունեության առաջնահերթ խնդիրը դարձավ պարենավորման հարցի լուծումը: 1918 թ. հուլիսի 26-ին քաղաքային խորհուրդը ստեղծեց հացի առևտրի կազմակերպմամբ զբաղվող հանձնաժողով, որը ձեռնամուխ եղավ նախկին վարչության անդամների կողմից Թիֆլիս տարված Ալեքսանդրապոլի բանկի գումարները՝ 1200052 ռ. վերադարձնելու գործին: Քաղաքային հին ու նոր իշխանությունների միջև ֆինանսական վեճը հարթվեցին միայն 1918թ. սեպտեմբերին՝ այն բանից հետո, երբ Թիֆլիս ժամանած Լ. Սարգսյանի խնդրանքով գործին միջամտեց Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Չամայանը [11, թ. 103-114]:

Քաղաքային ինքնավարության մտահոգության առարկա դարձավ նաև պայքարը համաճարակային հիվանդությունների դեմ: Քայլեր ձեռնարկվեցին Երևանից և Թիֆլիսից բժշկներ հրավիրելու, խոլերիայից մահացածների դիակ-

ները հատուկ վայրերում թաղելու, վեներական հիվանդությունների բուժման համար հիվանդանոցներ բացելու ուղղությամբ [10, թ. 62]: Փորձեր արվեցին նաև Թիֆլիս և Երևան փախած ալեքսանդրապոլցի ուսուցիչներին հետ բերելու միջոցով դարձրած գործը վերակենդանացնելու ուղղությամբ [30, թ. 26]:

Փաստորեն թուրքական տիրապետության շրջանում Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը՝ ազգային կուսակցությունների ու պետական այլ հաստատությունների բացակայության պայմաններում, դարձավ միակ մարմինը, որն իր մեջ կենտրոնացրեց ոչ միայն քաղաքի, այլ նաև գավառի հասարակական-պետական բոլոր գործերը՝ միաժամանակ հանդիսանալով միջնորդ քաղաքի ու գավառի ազգաբնակչության և թուրքական հրամանատարության միջև, փորձեց հնարավորինս զսպել թուրքական բռնություններն ու ապահովել հայության ֆիզիկական գոյությունը [31, թ. 8]: 1918 թ. դեկտեմբերի 4-ին ԱԳՆ ուղարկած իր զեկուցագրում Լ. Սարգսյանի ղեկավարած կառույցի գործունեության մասին Ալեքսանդրապոլում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Խոյեցյանը գրել է. «*Երբ նախկին վարչապետը յնուցսով քաղաքից Լ. Սարգսյանն իր թիմակիցներով մնաց նահատակվող ժողովրդին օգնելու: Այն՝ ինչ նրանք կրեցին թիւրքական տիրապետութեան ընթացքում, նրանց տոկոսնույթներ, ժողովրդի շահերի անձնագոհ պաշտպանութիւնը, ազնկութիւնն ու համարձակութիւնը խորին յարգանքի զգացմունք է արթնացնում իմ մէջ*» [8, թ. 90-96]:

1918 թ. աշնանն իրավիճակը կտրուկ փոխվեց. աշխարհամարտում պարտված Օսմանյան կայսրությունը դուրս բերեց իր զորքերը ռազմակալված տարածքներից: 1918 թ. դեկտեմբերի 4-ին հայկական զորքերը մեծ հանդիսավորությամբ մտան Ալեքսանդրապոլ [35, էջ 4]: Նույն օրը Ալեքսանդրապոլի գավառը հայտարարվեց ՀՀ մաս: Սակայն նոր գավառը տարածքային առումով Էականորեն տարբերվում էր նախորդից: Մեծ Ղարաքիլիսայի տեղամասը ՀՀ Մինիստրների խորհրդի հոկտեմբերի 7-ի որոշմամբ հանվել էր գավառի կազմից և Դիլիջանի ու Քարվանսարայի տեղամասերի հետ միավորվելով դարձել նոր ձևավորված Դիլիջանի գավառի մաս [37, էջ 4]: Դեկտեմբերի սկզբներին ստեղծված Ալեքսանդրապոլի նոր գավառն ընդգրկում էր միայն Արևելյան Շիրակի տարածքը, ուներ 4 տեղամաս և 129 գյուղ [32, թ. 20]:

Սովի ու համաճարակների ճիրաններում հայտնված գավառում անհրաժեշտ էր շպատ վերականգնել պետական և հասարակական հաստատությունների գործունեությունը և Ալեքսանդրապոլի քաղաքային իշխանություն-

ները մեծ դերակատարում ունեցան այդ գործում: Կարգ ու կանոն հաստատելու նպատակով 1918 թ. դեկտեմբերի 14-ին քաղաքային միլիցիայի կազմը հասցվեց 350 ոստիկանի, անհետաձգելի հանցագործությունների քննության համար ընտրվեց 3 դատավոր (Ա. Տայանց, Գ. Խոյեցյան, Տեր-Հակոբյան):

Համաճարակային հիվանդությունների կանխարգելման համար քաղաքագլխի նախագահությամբ ստեղծվեց արտակարգ հանձնաժողով, քաղաքը բաժանվեց չորս շրջանների՝ դրանցից յուրաքանչյուրում նշանակվեցին շրջանային բժիշկներ, բացվեցին բաղնիքներ ու որբանոցներ [11, թ. 153-154, 166, 172-174, 190]:

Գաղթականների կենսապայմանների ապահովման գործում անգնահատելի դերակատարում ունեցավ Գաղթականական հանձնաժողովը՝ Մ. Ղազարյանի նախագահությամբ [13, թ. 3]: Ընդամենը չորս ամսում՝ 1918 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 1919 թ. ապրիլի 2-ը (ապրիլից հետո գաղթականության պարենավորման գործը ստանձնեց Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն) [13, թ. 50] հանձնաժողովը քաղաքում հաստատված գաղթականությանն ապահովեց ապաստարաններով և բացեց 9 սննդատու կայան [13, թ. 7-13, 50]:

Ցավոք, ՀՀ կենտրոնական իշխանությունների և քաղաքագլուխ Լ. Սարգսյանի միջև լարված հարաբերությունները թույլ չտվեցին քաղաքային տնտեսության վերականգնման գործում լուրջ արդյունքներ գրանցել: Իրավիճակն ավելի սրվեց հայ-վրացական պատերազմի օրերին: Տնտեսապես քայքայված ազգաբնակչությանը սովի ճիրաններից փրկելու ակնկալիքով Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 30-ի իր արտակարգ նիստում որոշեց խնդրել կառավարությանը պատերազմը «*համարել ժամանակաբեկ էլ ծայրայեղ անցանկալի... եւ փորձել հարցը լուծել խաղաղ ճանապարհով..., դադարեցնել բռնութեամբ բնակչութիւնից հացի վերջին պաշարները խլելը եւ մոքիլիզացիան*» [11, թ. 3-4], սակայն արդյունքի չհասավ: 1919 թ. հունվարի 4-ին Կառավարությունը մերժեց խնդրանքը՝ պատճառաբանելով, թե պատերազմ հայտարարելու իրավունքը պատյամենտինն է:

Երբ ձմռան բուքերի պատճառով երկաթուղային հաղորդակցությունը Կարսի և Ջաջուռի միջև դադարեց՝ ողջ գավառը հայտնվեց սովի ճիրաններում [33, թ. 45-49], ինչն անվերադառնալիորեն փչացրեց գերազանցապես դաշնակցականներից կազմված Կենտրոնի և Ալեքսանդրապոլի ոչ դաշնակցական քաղաքային իշխանությունների միջև փոխհարաբերությունները:

Ի պատասխան Կառավարության 1919 թ. հունվարի 4-ի որոշմանն Ալեքսանդրապոլի

քաղաքային խորհուրդն անվստահություն հայտնեց օրենսդիր մարմնին հայտարարելով, թե «...մեր պառլամենտը իր ընտրությեան ձևով չի կարող լինել ժողովրդի կամքի իրական արտայայտիչը, որովհետև այն ընտրուել է Ազգային խորհուրդի կողմից, որի կազմը պատահական է եւ ոչ թէ դեմոկրատական ընտրությունների հետևանք: Լսելով կառավարության յունուարի 4-ի յաղորդումը՝ Դուման միաձայն որոշել է չյամանայնուել այդ հաղորդումը եւ միաժամանակ յայտնել կառավարությանը, որ արդարությունը պահանջում է Ալեքսանդրապոլի բնակչությանը հնարավորություն տալ ունենալու իւր ներկայացուցիչը» [24, թ. 1]:

Հանրապետության ամենամեծ քաղաքում իր ազդեցությունը վերականգնելու հույսով Կառավարությունը 1919 թ. փետրվարի 25-ին Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունից պահանջեց կազմակերպել քաղաքային խորհրդի ընտրություններ [16, թ. 11]: Դրանք տեղի ունեցան 1919 թ. մայիսի 4-ին և տվեցին հետևյալ արդյունքները. ՀՅԴ-ից Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդ ընտրվեց 38 ներկայացուցիչ, ՀԺԿ-ից՝ 9, Սոցիալիստական միությունից (Էսեռների և մենշևիկ Լ. Սարգսյանի գլխավորած Անկախ սոցիալիստների դաշինք)՝ 5: Նորընտիր քաղաքային խորհրդում քաղաքական ուժերի նման հարաբերակցությունը համարելով ընտրակեղծիքների արդյունք՝ Սոցիալիստական միությունը և ՀԺԿ-ն ընտրությունների արդյունքները վիճարկեցին դատարանում (դատական լուսմներն ավարտվեցին 1919 թ. դեկտեմբերի 1-ին: Երևանի շրջանային դատարանն ընտրությունների մասին բողոքը թողեց անհետևանք) [13, թ. 264]: Լ. Սարգսյանը դիմեց նաև ՀՀ վարչապետին և ՆԳ նախարարությանը՝ խնդրելով մինչև դատարանի վճռի հրապարակումը խորհրդի նոր կազմով նիստեր չգումարել, սակայն ՀՀ կառավարությունը որոշեց, որ դատական գործընթացը նորակազմ խորհրդի գումարման համար խոչընդոտ չէ [39, էջ 4]:

1919 թ. հունիսի 4-ին գումարված անդրամիկ նիստում Ալեքսանդրապոլի նորընտիր խորհրդի նախագահ ընտրվեց Հ. Բուդաղյանը, քարտուղար՝ Մ. Սիմոնյանը [11, թ. 216]: Համեմատաբար երկար տևեց քաղաքագլխի ընտրության հարցը: Տևական քաշքշուկներից հետո՝ սեպտեմբերի 23-ին այդ պաշտոնում ընտրվեց Հ. Մելքոնյանը: Վերջինս, սակայն, պաշտոնավարեց միայն վեց ամիս և 1920 թ. մարտի 22-ին հրաժարական տվեց [17, թ. 1-3, 12]: Պատճառը՝ ՏԻՄ և կենտրոնական իշխանությունների միջև իրավասության սահմանների համար պայքարն էր, որ վերածվելով անդունդի՝ չհաղթահարվեց նույնիսկ 1919 թ. համապետական ընտրություններում ՀՅԴ լիակատար հաղթանակից հետո:

Ստեղծված իրավիճակը, երբ քաղաքային իշխանություններն ու առանձին նախարարություններ իրարից անկախ գրադվում են միևնույն հարցի լուծմամբ, Ալեքսանդրապոլը մեկ անգամ արդեն կանգնեցրել էր կործանման շեմին: Այսպես, 1919 թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պարենավորման ու խնամատարության նախարարության, քաղաքային խորհրդի և Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) անհամաձայնեցված գործողությունների արդյունքում սկսվեց սով և հազարավոր մարդիկ մահացան: Ծայրահեղության հասած գաղթականությունն իր պարենավորման հարցը փորձեց լուծել գեներուժով՝ քաղաքը վերածելով ռազմական գործողությունների թատերաբեմի:

Խնդրին լուծում տալու հույսով կառավարությունը 1919 թ. մայիսի 28-ին ընդունեց գավառների ինքնավարության «ժամանակավոր օրենք», որով ընդլայնեց ՏԻՄ-երի իրավունքները, սակայն պետական իշխանությանը կրկին վերապահեց նույն գավառներում նման ֆունկցիաներով գործունեություն: Այլ կերպ ասած՝ պետությունն ու ինքնավարությունը պաշտոնապես դարձան մրցակիցներ, իսկ այդ պայքարում որպես կանոն պարտվողը ՏԻՄ-ն է: Դա երևաց 1920 թ. սկզբներին, երբ իշխանությունները կյանքի կոչեցին 25-26000 գաղթականներին Ալեքսանդրապոլի հանրակացարաններից համանուն գավառի և Կարսի շրջանի դատարկված գյուղեր տեղափոխելու ծրագիրը: Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդն ու ՀՀ խնամատարության նախարարությունը՝ Կարս-Ալեքսանդրապոլ շրջանի հատուկ ներկայացուցիչներ Ս. Բորոյանի և Օ. Մխիթարյանի միջոցով, միմյանց հետ գրեթե չհամագործակցելով սկսեցին իրագործել ծրագիրը: Իշխանության տարբեր ճյուղերի միջև անհամաձայնեցված գործողությունների արդյունքում գաղթականության տեղաշարժը հաջողվեց կազմակերպել միայն երրորդ անգամից, իսկ երբ Ալեքսանդրապոլի քաղաքային իշխանությունները փորձեցին ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող գյուղերը բնակեցնել շիրակցիներով, Խնամատարության նախարարության ներկայացուցիչ Ս. Բորոյանն ընդդիմացավ՝ քաղաքագլխի որոշումը համարելով շահադիտական [5, էջ 322]:

Հարաբերությունների հետագա սրման արդյունքում քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը հրաժարական տվեց, իսկ ՏԻՄ և կենտրոնական իշխանությունների միջև իրավասության սահմանների հարցն այդպես էլ լուծում չստացավ [5, էջ 339]:

Հ. Մելքոնյանի հրաժարականից հետո Ալեքսանդրապոլի քաղաքագլխի պաշտոնը նորից թափուր մնաց, ինչը բացասական ազդեցու-

թյուն ունեցավ քաղաքի ինքնավարության աշխատանքների արդյունավետության վրա: Հարցը լուծվեց միայն Կենտրոնի միջամտությամբ: Մայիսյան ապստամբության պարտությունից հետո՝ ՆԳ և զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանն ուղղակի պահանջեց Շիրակի նահանգապետից «շուտափույթ վերականգնել քաղաքային ինքնավարության գործունեությունը»: 1920 թ. հունիսի 16-ին խորհուրդն Ալեքսանդրապոլի քաղաքագլխի պաշտոնին հրավիրեց Երևանի փոխնահանգապետ Պ. Լևոնյանին [40, էջ 4]: Կարգավորվեցին նաև տնտեսական, պարենավորման, ֆինանսաբյուջետային, ոստիկանական, բժշկասանիտարական, վերստուգիչ և այլ ժամանակավոր ու մշտական հանձնաժողովների աշխատանքները [17, թ. 27]:

1919-1920 թթ. Ալեքսանդրապոլն ապրեց բարդ ու հակասական ժամանակահատված՝ խառնաշփոթ տեղական ինքնակառավարման մարմիններում, Կենտրոնի հետ բարդ հարաբերություններ, միջկուսակցական պայքար, սով, գաղթականություն, որբեր, Մայիսյան ապստամբություն: Այդուհանդերձ ՏԻՄ հետևողական քայլերի շնորհիվ՝ սկսած 1919 թ. կեսերից, կյանքը քաղաքում մտավ բնականոն հունի մեջ մտավ:

Առաջին դրական քայլերը կատարվեցին կրթության ոլորտում: Ալեքսանդրապոլում ՀՀ իշխանության հաստատումից հետո քաղաքային ենթակայության տակ գտնվող 6 տարրական դպրոցներում 50 %-ով կրճատվեց ուսման վարձը [9, թ. 5-8]: 1920 ուստարում տարրական դպրոցների թիվը հասավ 10-ի: ՀՀ կառավարությունը 2 մլն ռուբլի հատկացրեց դրանց վերանորոգման աշխատանքները կազմակերպելու համար [9, թ. 121]:

Կարևորելով կրթության և դաստիարակության միասնականության և հաջորդականության սկզբունքը, վարչությունը որոշեց բացել երկսեռ մանկապարտեզներ: Չնայած նյութական սուղ պայմաններին՝ առաջին մանկապարտեզը բացվեց 1920 թ. փետրվարի 4-ին: Այստեղ ընդունվեցին չքավոր ընտանիքների 122 երեխաներ [22, թ. 6, 15-16]:

Հիմք ընդունելով երաժշտական դպրոց բացելու մասին ՀՀ կառավարության 1920 թ. սեպտեմբերի 22-ի որոշումը՝ քաղաքային վարչությունը տնօրենի պաշտոնում Ալեքսանդրապոլ հրավիրեց հայտնի երգահան Ռոմանոս Մելիքյանին [15, թ. 91]:

Վարչությունը մեծ պատրաստակամություն ցուցաբերեց նաև համալսարանի բացմանը՝ տրամադրելով անհրաժեշտ շենքային պայմաններ: Քաղաքային իշխանություններն առաջարկեցին Ալեքսանդրապոլ տեղափոխել նաև փոստ-հեռագրատունը, երկաթուղային, ջրային և գյուղատնտեսական վարչությունները: «Մեր

առաջարկի ընդունման դեպքում շնչասպառ Երևանը կթեթեանա, և Ալեքսանդրապոլին կտրուի առաջ գալու և զարգանալու հնարավորություն», - գրում էր Հ. Մելքոնյանը [15, թ. 3]: Երբ Նախարարների խորհրդի 1920 թ. հունիսի 21-ի որոշմամբ համալսարանը տեղափոխվեց Երևան՝ քաղաքային խորհուրդն ընդդիմացավ: «Ամբողջ երկրի նիսիները քամել և խոսացնել մի կէտում, և գաւառը արհնաքամ անել», - գրված է Հ. Հանրային կրթության նախարար Գ. Ղազարյանին ուղարկված նամակում, - համարում ենք մեծապէս վնասակար հայրենիքի համար [6, էջ 210]:

Քաղաքային խորհուրդը հաստատեց փողոցների վերանորոգման, դրանց անվանափոխության, հարկերի, տուրքերի ու սակագների սահմանման և մի շարք այլ օրինագծեր: Քաղաքի օգտին սահմանվեց փոխադրամիջոցներից գանձվող տուրք: Ելնելով բնակչության տնտեսական ծանր դրությունից 1920 թ. հունիսի 16-ին կրճատվեց քաղաքապատկան հողերից գանձվող հարկը [40, էջ 4]: Սննդամթերքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների գների անհարկի բարձրացում թույլ չտալու նպատակով քաղաքային վարչությանը կից ստեղծվեց «Ավագների խորհուրդ» [21, թ. 63]:

Լուրջ քայլեր ձեռնարկվեցին նաև փողոցները բարեկարգելու ուղղությամբ: Քաղաքային խորհրդի առաջարկով հրավիրված ճարտարագետների ժողովը որոշեց կենտրոնական փողոցները սալիկապատել [18, թ. 90-91] և այդ աշխատանքների իրականացման համար կապալառուների մրցույթ հայտարարեց [23, թ. 12]: Կառավարության տրամադրած նյութական միջոցներով վերականգնվեց քաղաքի ջրամատակարարման ցանցը [20, թ. 93]:

Գործնական քայլեր կատարվեցին նաև քաղաքի էլեկտրաֆիկացման գործում: Քաղաքային խորհուրդը 1920 թ. փետրվարին մունիցիպալիզացրեց մասնավոր հիմունքներով գործող էլեկտրակայանը, իսկ երբ լուսավորության խնդիրը դրանով չլուծվեց, որոշեց կառուցել ևս մեկը՝ քաղաքապատկանը [20, թ. 220]:

Քաղաքային ինքնավարության սոցիալական քաղաքականության անբաժանելի մասն էր կազմում նաև հանրային սննդի կառույցների ղեկավարումը: Սկսած 1919 թ. վերջերից վարչության հիմնական խնդիրներից մեկը դարձավ գաղթականության և չքավոր ազգաբնակչության շրջանում հացի բաշխումը: Հացահատիկի գնումները կատարվեցին Շարուրի շրջանում [29, թ. 81], իսկ բաշխումը վստահվեց կոոպերատիվներին [14, թ. 111]:

Ցավոք, 1920 թ. սեպտեմբերին վերջերին սկսված թուրք-հայկական պատերազմը խաթարեց քաղաքային իշխանությունների բնականոն գործունեությունը: Նոյեմբերի 5-ի լուսա-

բացին քաղաքագլուխ Պ. Լևոնյանը, վարչության անդամներն ու պետական գրեթե բոլոր կառույցների ղեկավարները՝ հակառակ ՀՀ իշխանությունների ռազմակալվելու դեպքում Ալեքսանդրապոլը չլքելու մասին որոշմանը, հեռացան քաղաքից՝ մատնելով այն անիշխանության [19, թ. 226]: Օրհասական այդ պահին գավառի անպաշտպան հայ բնակչության ֆիզիկական բնաջնջումը կանխելու նախաձեռնությամբ կրկին հանդես եկավ Լ. Սարգսյանը: Ժողովրդականներից և սոցիալ-դեմոկրատներից ձևավորելով 15 հոգուց բաղկացած կոալիցիոն մարմին (խորհրդականներ՝ Ե. Միրաքյան, Պ. Շերմազանյան) [2, էջ 1] վերջինս իբրև Ալեքսանդրապոլում ՀՀ կառավարության ներկայացուցիչ գեներալ Միլիկյանի հանձնարարությամբ բանակցություններ սկսեց թուրքերի հետ՝ հույս ունենալով խոչընդոտել թուրք-բուլղարական մերձեցմանը, սակայն, ապարդյուն: Ալեքսանդրապոլ մտած թուրքերը նախընտրեցին բանակցել բուլղարիկների հետ՝ այդ կերպ հեղինակագրկելով Լ. Սարգսյանի գլխավորած կոալիցիոն իշխանությանը, և հասան քաղաքում խորհրդային կարգերի հաստատմանը [26, թ. 1-3]: Նոյեմբերի 17-ին ստեղծվեց խորհրդային իշխանության մարմին՝ հեղափոխական կոմիտե (հեղկոմ) [26, թ. 5]: Թուրքական հրամանատարությունն Ալեքսանդրապոլի խորհրդային իշխանությունը ճանաչեց այնքանով, որքանով այն պետք էր իրեն արևելահայության բնաջնջման վերջին արարն իր ավարտին հասցնելու համար [34, թ. 29]: Թուրքական սարսափներն ապրող Ալեքսանդրապոլի գավառի բնակչության գլխին իսկական պատուհաս դարձան հատկապես Ներքին գործերի բաժինն ու Արտակարգ հանձնաժողովը: Միայն 1921 թ. հունվարի 25-ին Հեղկոմը գիտակցելով իր սխալը վայր դրեց լիազորությունները [27, թ. 54-57]:

Թուրքական հրամանատարությունն անմիջապես ձեռնամուխ եղավ տեղական իշխանության նոր մարմիններ ձևավորելու գործին: Նրանց աջակցությամբ քաղաքային ոստիկանապետ Ս. Մատինյանն իրեն հռչակեց քաղաքագլուխ [28, թ. 4]: Մարտի 18-ից իրենց աշխատանքները սկսեցին նաև քաղաքային խորհուրդն ու վարչությունը: Իրավիճակն անփոփոխ մնաց մինչև 1921 թ. ապրիլի վերջերը, երբ թուրքերը հեռացան Ալեքսանդրապոլի գավառից:

**Եզրակացություն:** Ալեքսանդրապոլի տեղական ինքնակառավարման մարմինները 1918-1920 թթ. ապրեցին բարդ ու հակասական ժամանակաշրջան: Թուրքական կրկնակի ռազմակալումը 1918 և 1920 թթ. անդառնալի հարված հասցրեց քաղաքի ինչպես սոցիալ-տնտեսական դրությանը, այնպես էլ ժողովրդագրական պատկերին: Դրան գումարված միջկուսակցական պայքարը, սովն ու բազմահազար գաղթա-

կանությունն իրենց դրոշմը թողեցին ինքնավարության աշխատանքների վրա: Բայց և այնպես, քաղաքային իշխանություններն անգնահատելի աշխատանք կատարեցին այդ դժվարին իրավիճակում կյանքը բնականոն հունի մեջ դնելու ուղղությամբ:

### Օգտագործված գրականության ցանկ

1. **Ալեքսանյան Կ.**, Փաստաթղթեր 1918 թ. մայիսին թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գրավման և քաղաքային ինքնավարության նոր մարմինների ձևավորման վերաբերյալ. // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2011, N 1, էջ 27-40:
2. Ալեքսանդրապոլի ղեպերը, «Ժողովուրդ», Երևան, 1920, N 182, 9 նոյեմբերի:
3. Ալեքսանդրապոլում, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1918, N 116, 20 յունիսի:
4. **Ատրպետ**, Ալեքսանդրապոլ քաղաքի 200 օրվա գրաւումը Օսմանեան զօրքերից, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1918, N 262, 21 դեկտեմբերի:
5. Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ.: Փաստաթղթերի հավաքածու: Կազմ. Կ. Ալեքսանյան: - Եր., 2012, 496 էջ:
6. Երևանի համալսարան, 1918-1920 թթ.: Վավերագրերի ժողովածու: կազմ.՝ Հ. Մամիկոնյան, Ս. Միրզոյան: - Եր., ԵՊՀ հրատ, 1995, 335 էջ:
7. **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը: - Պէյրոթ, «Համազգային», 1968, 487 էջ:
8. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 126:
9. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 172:
10. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2710:
11. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2711:
12. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2713:
13. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2715:
14. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2779:
15. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2798:
16. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2799:
17. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2807:
18. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2813:
19. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2863:
20. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2866:
21. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2889:
22. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2891:
23. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2897:
24. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 2996:
25. ՀԱԱ ֆոնդ 105, ցուցակ 1, գործ 3003:
26. ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 10:
27. ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 33:
28. ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 3<sup>ա</sup>, գործ 70:
29. ՀԱԱ ֆոնդ 199, ցուցակ 1, գործ 147:
30. ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 97:
31. ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 125:
32. ՀԱԱ ֆոնդ 203, ցուցակ 1, գործ 4:
33. ՀԱԱ ֆոնդ 205, ցուցակ 1, գործ 689:
34. ՀԱԱ ֆոնդ 4033, ցուցակ 4, գործ 127:
35. **Հայրապետյան Ա.**, Ցարական կառավարության քաղաքային ռեֆորմները XIXդ. Երկրորդ կեսին և Ալեքսանդրապոլը, ԳՊՄԻ տարեկան

- հանրապետական գիտաժողովի նյութեր. // Գյումրի, 2006, էջ 42-50:
36. Հեռագիրներ Ալեքսանդրապոլի գրաման մասին, «Չանգ», Երևան, 1918, N 78, 11 դեկտեմբերի:
37. Ղարաքիլիսեի յանձնումը, «Մշակ», Թիֆլիս, 1918, N 20, 18 հոկտեմբերի:
38. Յովսեփեան Մ., Ալեքսանդրապոլը՝ գրառումեն ետք. (Ականատեսի պատմութիւնը), «Աշխատանք», թերթ, Եր., 1918, N 6 (206), 8 (26) յունիսի:
39. Նոր կեանք, Ալեքսանդրապոլի քաղաքային ընտրութիւնների շուրջ, «Ժողովուրդ», Երևան, 1919, N 60, 6 հունիս:
40. Քաղաքային Խորհրդի 1920 թ. յունիսի 16-ի նիստի որոշումներից, «Շիրակի աշխատանք», Ալեքսանդրապոլ, 1920, N 25, 20 յունիսի:

*Сдана/Հանձնվել է՝ 08.10.2021*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 15.10.2021*

*Принята/Ընդունվել է՝ 22.10.2021*